

— Զենովայի պրոֆեսորներից մէկը Revue des Revues հանդիսի մէջ գրած մի յօդուածով ապացուցանում է, որ Ամերիկայի գիւտի իսկական հեղինակը Ֆլորենցայի մի գիտնական է, Պաօլօ Տոսկանելլի անունով, Պորտուգալիայում արդէն ծրագիր էր կազմուում մի նոր, ուղիղ գծով հաղորդակցութիւն հաստատելու Եւրոպայի և Ասիայի ամերիկայի մէջ, փոխանակ Ամերիկայի հարաւային կողմով շրջան առնելու երբ պատահամբ, նաւակոծութեան հանդիպելով, այնտեղ եկաւ Քր. Վոլմորսոս, նա այստեղ տեղեկացաւ, որ Ֆլորենցայի նշանաւոր բժիշկ և աշխարհագրագէտ Տոսկանելլին ունի շատ հմուտ կերպով կազմուած մի ծրագիր դէպի արեւմուտք Ճանապարհորդութեան համար, բանակցութեան մէջ մտաւ նորա հետ, ստացաւ նորանից քարտէզներ և կարեւոր հրահանգներ, որոնցով առաջնորդուելով և կարողացաւ իւր մեծ գիտն անել, Տոսկանելլին այդ ժամանակ արդէն մեռած էր, ուստի և նորա գատը պաշտպանող չեղաւ ու նա մնաց անյայտ, Այդ անունն ասպարէզ գալն այժմ այն նշանակութիւնն ունի որ Ամերիկայի գիտն այլ ևս իբրեւ մի համարձակ քայլի հետեանք կամ բաղդի բերմունք պէտք է չհամարուի, այլ վերածնութեան դարում սկսուած գիտնական լուրջ աշխատութեան արդիւնք:

* *

ՍՈՒՐ ՄՏՔԵՐ:

Առանձնութիւնը այնպիսի վայելք է, որ ոչ ոքի հետ բաժանել չի կարելի:

Ոսկւով ծախած խօսքերը ոսկէ խօսքեր չեն լինում:

Հատ մարդիկ կարծում են՝ առաքինութիւնն ուրիշ ոչինչ է, բայց եթէ խիստ լինել դէպի օտարները:

Հատերը բաղդը ձեռքից բաց են թողնում՝ բաղդ որոնելու համար:

Թշնամիներին մարդ աւելի է յիշում, քան բարեկամներին:

Յետոտ փողոցով անցնելիս, ինչքան և դու ինքըդ զգոյշ լինիս՝ ուրիշները քեզ կցետոտեն:

Եթէ մենք ինքներս այնչափ շատ պակասութիւններ չունենայինք՝ այնպիսի մեծ զուարճութիւն չէր պատճառի մեզ ուրիշների մօտ պակասութիւններ գտնելը:

Ամենալաւ միտթարութիւնը օգնութիւնն է:

Ամենաբաղդաւորները նախ են, որոնք բաղդի կարիք չունին:

Որչափ մարդու հաստատակամութիւնը պակասում է, այնչափ աւելանում է կնոջ զօրութիւնը:

Համեստ մարդիկ յաճախ օտարների նախանձի պատճառով են սկսում ուշադրութիւն դարձնել իրենց առաւելութիւնների վերայ:

Որչափ շատ բան կայ մէկի մէջ՝ նոյնչափ շատ գտնում է նաև ուրիշների մէջ:

Համեմատիւր ունեցածդ ուրիշների ունեցածի հետ՝ բաղդ կայ, որ կաւելացնես, բաղդ կայ, որ կկորցնես:

Պան սիրուն ծաղիկներ ճանապարհի վերայ ծաղկած, որոնցով ոչ ոք չի հետաքրքրուում, բայց եթէ տանես ժայռերի գլխին ու ձորերի խորքում՝ տնկես՝ շատերը շինք կկտորեն ձեռք բերելու համար:

Ա. Իմ գանձը իմ գիտութիւնն է: — Բ. Որտեղ էք թաղել ուրեմն այդ գանձը:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՔԱՐՈՉՔ ՄԵՐ ՄԷՁ.

Տարուայ այն օրերն են, երբ մեր եկեղեցւոյ քեմից եւս թէպէտ դժբաղդաւար ոչ ամեն տեղ քարոզ է լսուում: Յանկալի էր ի հարկէ, որ Տիրոջ կենդանի խօսքի քարոզութիւնը իւր տաճարներից երբէք, տարուայ ոչ մի ժամանակ, պակաս չլինէր, սակայն զոր լինինք առայժմ՝ այս սակաւ օրերով եւ հարցնենք՝ արդեօք ի՞նչ չափով զոնէ այդ սահմանափակ շրջանի մէջ քարոզի պահանջը լրումն է գտնում մեզանում:

Պէտք է խոստովանենք, որ մենք ինքներս այնչափ փորձառութիւն եւ ընդարձակ ծանօթութիւններ չունինք, որ կարողանայինք բազմակողմանի կերպով քննադատել եղածը, թերութիւններն ու զեղծումները ցոյց տալ եւ ուղիղ մասաւարճ գծել: Բայց այդ չի արգելում անշուշտ:

որ իրաւունք համարենք խնդիր արծարծել եւ մի քանի մեզ զբաղեցնող կարեւոր կէտերի վերայ ուշադրութիւն հրաւիրել:—Ամենից առաջ մենք կարող ենք տեսականապէս որոշել, թէ ինչպէս պէտք է մօտենայ քարոզիչն իւր գործին. քեմի վերայ նա ինքնազուխ չէ՝ իւր Տիրոջ ծառան է ու աշակերտը, եւ Նորս խօսքը պէտք է խօսէ: Այդ չէ նշանակում հարկաւ, որ քառ առ քառ, անտարբեր կերպով, պէտք է կրկնէ աւետարանի ասածները, կամ՝ աւելացնէ նոցա վերայ *էքսթրա* խրթին քացատրութիւններ, որոնք պարզելու փոխարէն աւելի եւս մթնացնեն ասածը. այլ որ խորասուզուէ ամբողջապէս ս. Գրքի մէջ, աշխատէ ըմբռնել, թէ նոյն ինքն աւետարանի մեծ Քարոզիչը ինչ է քարոզել իւր ժամանակակից ժողովրդին՝ ի՞նչ դէպքում ինչպէս է խօսել եւ ի՞նչ նպատակով, եւ ապա թէ կարողանայ հաշիւ տալ իրեն ինչպէս կրացատրէր Նա իւր քարոզած այս կամ այն մեծ սկզբունքը ներկայ դէպքում, ներկայ ժողովրդին—եւ այնպէ՛ս քացատրել ձգտէ: Եթաւ դժուարին եւ գրեթէ անհասանելի մի ձգտում է այս, բայց սովորեցնում է գոնէ, թէ ինչ պէտք է *էքսթրա* քարոզիչը:

Որչափ մեր ունեցած տեղեկութիւններով դատել կարող ենք՝ քարոզի նկատմամբ մեր մէջ եղած եւ մանաւանդ երիտասարդ սերունդի մէջ աւելի ու աւելի ընդհանրացող զեղծումն այն է, որ աշխատում են քեմի վերայից զանազան հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդել, առանց ուշ դարձնելու՝ ունի՞ն արդեօք նոքա որ եւ է կապ եկեղեցւոյ, քրիստոնէութեան, կրօնի հետ: Ետտ փոսնգաւոր եւ աններելի մի զեղծումն:—Ի՞նչ խօսք որ քարոզը հետաքրքիր պէտք է լինի, որպէս զի ունկնդիրներ զրաւէ՝ օգտակար պէտք է լինի եւ գործնական, որպէս զի եկեղեցւոց ելնող իւրաքանչիւր որ մի քան տարած լինի իւր հետ. բայց հետաքրքիր եւ օգտակար քաներ ասելու համար ուրիշ տեղեր, ուրիշ միջոցներ կան. եկեղեցւում՝ Սոկրատն ու Պլատոնը՝ հին եւ նոր աշխարհի փիլիսոփաները, գիտուններըն ու քանաստեղծները չպէտք է խօսեն, այլ Քրիստոս միայն. աշխարհային կենցաղավարութեան ուտելիքի՝ արուեստի եւ գիտու-

թեան մասին պէտք է չլինի խօսքը, այլ հոգեւոր կենցաղավարութիւն, կրօնական—քաղաքական կեանքի, հոգւոյ կարիքների եւ վայելքների մասին:

Այսպէս ներկայ համարում՝ յառաջ է քերտած քարոզի մի նմուշ, որի իմաստով խօսել ենք վաղարշապատի եկեղեցւում: Օրինակելի քարոզ չէ մեր տուածը, յամենայն դէպս, մի շինական համայնքի առաջ քառ առ քառ արտասանելու շատ յարմարութիւններ չունի, եւ մենք ինքներս խօսելուց յետոյ՝ որչափ եւ աշխատում էինք պարզել, ժողովուրդի ըմբռնման յարմարեցնել՝ այն զգացմամբ հեռացանք, որ ունկնդիրների մեծագոյն մասի համար կորած էր այն. բայց գուցէ այդ օրինակը խրատական կլինի նոյն իսկ իւր թերութիւնների համար: Ամենաւեական թերութիւնն այն է երեւի, որ մենք ժողովուրդի լեզուն չենք հասկանում: Ինչպէս վերեւ ակնարկեցինք՝ Աստուծոյ խօսքը կենդանի կերպով քարոզելու համար քաւական չէ, որ իմանանք, թէ ս. Գրքի մէջ ինչ է առած, այլ որ մեզ պատկերացնել կարողանանք, թէ այնտեղ խօսողները ինչպէս կխօսէին այստեղ՝ ներկայ հանգամանքներում, ներկայ մարդոց հետ. իսկ այդ անելու համար պէտք է ժողովուրդի հոգին ճանաչել, նորա ցաւերն ու հոգսերն իմանալ, նորա լեզուով՝ նորա սրտի լեզուով խօսել: Այդպէս էր վարւում ինքը Փրկիչն՝ ամենաքարճը սկզբունքներն ամենահասարակ, ժողովուրդի ամենօրեայ կեանքից առած, օրինակներով եւ առականերով էր քացատրում:

Սակայն մենք յաւակնութիւն ունինք կարծելու, թէ միայն նորա համար չէ մեր խօսածը ժողովուրդին անհասկանալի, որ նորա լեզուով չենք խօսում. մենք համոզուած ենք, որ եթէ ժողովուրդի քարքառով իսկ խօսէինք՝ քարոզի էական բովանդակութիւնը անհասկանալի կը մնար. որովհետեւ մենք խօսում ենք այն նւթադրութեամբ, թէ մեր առաջ մի քրիստոնեայ համայնք է կանգնած, որին նոր կրօն չպէտք է դաս տանք, այլ նորա ունեցած հաւատը կենդանացնենք եւ արծարծենք, մինչդեռ մեր ժողովուրդը աւետարանի, իւր քրիստոնէական կրօնի մասին շատ դէպքում՝ ամենատարբա-

կան ծանօթութիւններ անգամ չունի: Շատերը դորանից կեզրակացնեն երեւի թէ ուրեմն ժողովուրդի հասկացողութեան իջնել, նորա ըմբռնման եղանակին, նորա զգացումներին յարմարուիլ պէտք է. այդ իջնել, եթէ միայն դորանով ուկնդիրներին քարձրացնել կարող ենք, եթէ մենք ենք միայն իջնում, իսկ Աստուծոյ խօսքը իւր քարձրութեան վերայ է մնում: Անտեղի է եւ դատաւարտելի միանգամայն՝ գոհակամալ ամբոխի հետ, որ պէս զի նա մեր ասածն ու արածը հասկանայ, դատաւարտելի մանաւանդ, եթէ մենք շոյում ենք ամբոխի հակումները, նորա սիրելի առարկաներից, նորա սիրած եղանակով խօսում՝ արտաքին միջոցներով տալաւորութիւն գործել աշխատում, որպէսզի շատ ունկնդիրներ ունենանք: Փրկիչն երբէք այդ կերպով չի յարմարուել ամբոխին. Նա շատ ուկնդիրներ ունէր, բայց քերքը նորան հասկացան ու հետեւեցին. մենք եւս պէտք է գերադասենք քիչ հասկացողներ ունենալ քան շատ ծափահարողներ. միայն պէտք է քշով չբաւականանանք, այլ աշխատենք աւելի եւ աւելի կատարեալ լինել՝ շատերին փաստակեւոյ համար որովհետեւ հունձը շատ է:

Այսպիսի մտածմունքները դրդեցին մեզ մի զուտ **Իշխան** ընտրան ընտրել քարոզի համար, աշխատել զուտ **Իշխան** ոգով եւս արծարծել այն: Կրկնում ենք՝ ո՛չ ընտրանի վրսեմութիւնը, ոչ քարոզի տասնապատիկ հարիւրապատիկ աւելի ճարտար կազմութիւնը նշանակութիւն ունի, եթէ ունկնդիրներին համար անմատչելի են այդտեղ արծարծուող մտքերը, կամ անմատչելի ձեւով արտայայտուած. բայց յատկապէս **Արքայ** ընթերցողներին մենք կկամենայինք յիշեցնել: որ աւետարանի մէջ այդպիսի **Իշխան** գաղափարներ կան, եւ հարկաւոր է մի քրիստոնեայ ժողովուրդի ըմբռնել տալ այդ գաղափարները. քարոզի բուն նպատակը պէտք է լինի այդ: Եթէ ժողովուրդի համար անըմբռնելի են նորա՝ մենք իրաւունք պէտք է համարենք բոլորովին ձեռք բաշել նոցանից, այլ պէտք է աշխատենք այնչափ քարձրացնել ժողովուրդին, որ նա ըմբռնէ եւ ապրի այդ գաղափարներով: Ո՛չ միայն քրիստոնէութեան շրջանակից դուրս

եղող խնդիրները, այլ եւ քարոյական խրատներ, այսինքն նոյն իսկ աւետարանից առած **Իշխան** քարոզի միակ զբաղմունքի առարկան չպէտք է կազմեն. նա պէտք է աշխատէ կրօնական կեանք դարգացնել՝ ներքը, հոգւոյ մէջ այնպիսի վսեմ՝ զգացումներ շարժել, որոնք ինքնաբերաբար քարոյական կեանք են յառաջ բերում: իսկ դորա համար անհրաժեշտ է զբաղուիլ եւ զբաղեցնել զուտ կրօնական խնդիրներով. փոքրից սկսել, բայց անվատ աշխատել համոզուած լինելով, որ շատ դժուարին եւ ծանրութեամբ յառաջ գնացող գործ է այդ, որ այդպիսի դժուարութեամբ հոգու մէջ ձգած սերմերն են միայն ամու՛մ եւ Աստուծոյ արքայութեան անդաստանին արժանի ծառ դառնում:

Մի քանի խօսք եւս քարոզի կազմութեան մասին:—Որչափ ծանօթ ենք՝ մեզանում՝ խօսուած քարոզները մեծ մասամբ ո՛չ մի կազմութիւն չունին: Շատ քարոզիչներ տարին մի քանի անգամ՝ միայն առիթ ունենալով խօսելու՝ իւրաքանչիւր անգամին հանդէս են բերում՝ իրենց գրեթէ բոլոր գիտցածը, շարում են միմեանց ետեւից **ս. Գրքի վկայութիւններ**, խրատներ, յանդիմանութիւններ, կեանքի օրինակներ, եւ վերջացնում՝ քարոզը ուր կամենում են, կամ ուր նիւթը սպառում է: Սակայն եկեղեցում խօսածը միայն այն ժամանակ կարող է քարոզ համարուիլ, երբ մի ընտրան ունի, այսինքն մի հիմնական միտք, որի շուրջը պտտուում են միւս բոլոր ասածները: Սովորաբար հարկ է լինում մի **Իշխան** պարզել թէ ինչո՞ւ է բերուած այդ ընտրանը, ապա քարոզի նիւթը 2—3 **Իշխան** բաժանելով՝ քացատրուում է հիմնական գաղափարը զանազան կողմից կամ՝ զանազան տեսակէտների ներքոյ եւ վերջը եզրակացութիւն հանուում: Այդպիսով միայն կարելի է միութիւն պահել քարոզի մէջ եւ առաջնորդող գաղափարը համոզեցուցիչ դարձնել: Այդպէս վարուել աշխատեցինք եւ մենք:

Կ. Վ.